ՍԱԼԱՀ ԱԼ-ԴԻՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

Իր գահակալության վերջին տարիներին Սիրիայի տիրակալ Նուր ալ-Դինը փորձում էր նվաճել նաև Եգիպտոսը, որտեղ Ֆաթիմյան շիա աղանդի խալիֆաները մոտ երկու դար իշխելուց հետո թուլացման շրջան էին ապրում։ Այս նպատակով նա երեք անգամ զորք ուղարկեց դեպի Նեղոսի ափերը։ Եգիպտոսը Զանդիների պետությանը չմիացվեց, սակայն Նուր ալ-Դինի զորավարներից մեկի՝ ծագումով քուրդ Այյուբ Իբն Շադիի որդին՝ Սալահ ալ-Դինը, դարձավ Ֆաթիմյան վերջին խալիֆա Ադիդի վեզիրը (1169) և երկրի կառավարումը վերցրեց իր ձեռքը։ Խալիֆայի մահից հետո (1171) Սալահ ալ-Դինը զավթեց իշխանությունը Եգիպտոսում, իսկ Նուր ալ-Դինի մահից հետո (1174) իրեն սուլթան հռչակեց, դառնալով Այյուբյան հարստության հիմնադիրը։

Հանդիսանալով արաբական աշխարհի խոշորագույն տիրակալը, նա ծրագրեց նախ, մահմեդական մյուս իշխանություններին իրեն ենթարկել, ապա նաև՝ խաչակիրներին ջախջախել ու դուրս մղել Արևելքից։ 1174 թ. Սալահ ալ-Դինը գրավեց Դամասկոսը, 1175 թ. պարտության մատնեց Հալեպի և Միջագետքի միացյալ ուժերին և թշնամուն հետապնդելով հասավ մինչև Հալեպի դարպասները։ 1176 թ. կնքված հաշտությամբ Հալեպի տիրակալ ալ-Մալիք ալ-Սալիհը (Նուր ալ-Դինի որդին) պարտավորվեց Եգիպտոսի սուլթանին ռազմական օգնություն ցույց տալ[1]։

Սալահ ալ-Դինի արագ առաջխաղացումը որոշակի վտանգ էր ներկայացնում նաև Կիլիկյան Հայաստանի համար։ Այստեղ Մլեհ իշխանապետի սպանությունից հետո (1175) իշխանության գլուխ էր անցել Ռուբեն III-ը (1175—1187)։

1177 թ. Հարիմ ամրոցի կառավարիչ Սաադ ալ-Դին Գումուշտեգինը ապստամբեց Հալեպի տիրակալ ալ-Մալիք ալ-Սալիհի դեմ և փորձեց ամրոցը վաճառել ֆրանկներին։ Սակայն նա ձերբակալվեց իր տիրակալի կողմից։ Չնայած դրան, Հարիմի բնակիչները բերդը չհանձնեցին ալ-Մալիք ալ-Սալիհին։ Թեև Հալեպը զինակցության մեջ էր Սալահ ալ-Դինի հետ, սակայն վերջինս հեռու էր գտնվում։ Անտիոքի իշխան Բոհեմունդ III-ը (1163—1201) և Տրիպոլսի դուքս Ռայմունդ III-ը (1152—1187), իմանալով Գումուշտեգինի և նրա կողմնակիցների ապստամբության մասին, պաշարեցին Հարիմը։ Բայց ամրոցի բնակիչները, ըստ երևույթին, վախենալով Հալեպի զորքի և Սալահ ալ-Դինի վրեժից, չենթարկվեցին նաև ֆրանկներին։ Վերջիններս չորս ամիս համառորեն փորձեցին գրավել ամրոցը, բայց ապարդյուն։ Ըստ արաբ պատմիչ Իբն ալ-Ադիմի, Հարիմը գրոհողների մեջ էր նաև Իբն Լևոնը։ Խոսքը, իհարկե, վերաբերում է Ռուբեն III-ին, որը հավանաբար, հայկական զորամասով այստեղ էր եկել Անտիոքի և Տրիպոլսի իշխաններին օգնության։ Ի վերջո, 1178 թ. ամռանը, Հարիմի բնակիչները ստիպված էին հպատակություն հայտնել ալ-Մալիք ալ-Սալիհին[2]։

Ռուբեն III-ը, ի տարբերություն իր նախորդի՝ Մլեհ իշխանապետի, հարևան խաչակիր պետության՝ Անտիոքի իշխանության հետ, լավ հարաբերություններ էր պահպանում։ Դրա ապացույցն է նաև վերոհիշյալ ռազմական օգնությունը։

Վերոհիշյալ դեպքերից երկու տարի անց՝ 1180 թ., Սալահ ալ-Դինն իր զորքով արշավում է Կիլիկիայի վրա։ Արշավանքի առիթ հանդիսացավ Կլըջ Արսլանի դիմումը Սալահ ալ-Դինին, որով նա խնդրում էր համաձայնություն կնքել և գանգատվում էր հայերից[3]։ Կլըջ Արսլանը տեղեկացնում էր, որ Ռուբեն III-ը թուրքմեն ցեղին թույլատրել էր իրենց հոտերն արածեցնել Կիլիկիայի

---

[1] Lane-Poole Stanley, History of Egypt in the Middle Ages, London 1900, p. 200.

[2] Kamal ad-Din Ibn al-Adim, Tarikh ul-Halab, Damas, t. III, 1968, p. 36—38.

[3] Ibn Challikan, Biographical Dictionary, v. III, New York and London, 1868, p. 342, «Արաբական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», կազմեց Հ. Նալբանդյան (այսուհետև «Արաբական աղբյուրները»), Երևան, 1965, էջ 293։

սահմաններում, ապա զզջալով, հարձակվել էր նրանց վրա, մի մասին կոտորել, իսկ մնացածներին (500 հոգի) գերել ու բռնագրավել նրանց ունեցվածքը[4]։ Այս արշավանքի բուն պատճառը, թերևս, հայ—խաչակիր զինակցությունն էր, որը ձևնտու չէր ինչպես Սալահ ալ-Դինին, այնպես էլ Իկոնիայի սուլթանությանը։

Արձագանքելով Կլըջ Արսլանի դիմումին, Սալահ ալ-Դինն, իր և Հալեպի զորքերի գլուխն անցած, գնաց ու Բեհեսնիի և Հիսն Մանսուրի միջև՝ Կապույտ գետի (Նահր ալ-Ազրակ) մոտ, միացավ Կլըջ Արսլանի բանակին։ Այստեղից նա արշավեց դեպի Սև գետը (Նահր ալ-Ասուադ), «որը Իրն Լեոնի երկրի սահմանն է կազմում»[5], և գրավեց Սև գետի մոտ գտնվող Մանաքիր (Հիսն ալ-Արման) ամրոցը։ Ռուբեն III-ը, գտնվելով հսկա բանակի առջև, գերադասեց հաշտություն կնքել, վերադարձնելով գերի թուրքմեններին[6]։ Սալահ ալ-Դինը հաշտություն կնքեց նաև Մոսուլի, Ջազիրայի, Իրբիլի (Արբելա), Քեյֆայի և Սարգինի տերերի հետ (1180)[7]։

Այն, որ Սալահ ալ-Դինը, իր տրամադրության տակ ունենալով մի քանի բանակներ և հաջողության հասնելով, չշարունակեց առաջխաղացումը դեպի Կիլիկիայի խորքերը, բացատրվում է նրանով, որ Այյուբյան սուլթանը դեռևս չէր հաղթահարել Երուսաղեմի խաչակիր թագավորությանը, իսկ Հյուսիսային Սիրիան ու Վերին Միջագետքը դեռևս վերջնականապես նվաճված չէին։

1181 թ. վախճանվեց Հալեպի տիրակալ ալ-Մալիք ալ-Սալիհը։ Այս հանգամանքը, ինչպես և Միջագետքի ամիրների հետ արգասավոր բանակցությունները Սալահ ալ-Դինին հնարավորություն տվեցին դիմելու նոր նվաճումների։ 1182—1183 թթ. նա ներխուժեց Միջագետք և աստիճանաբար իրեն ենթարկեց ամբողջ երկիրը։ Նվաճեց և Հալեպ քաղաքը։ 1186 թ. Այյուբյանների պետությունը տարածվում էր մինչև Վերին Միջագետք ու Հայկական Տավրոս[8]։

1185 թ. Անտիոքի իշխան Բոհեմունդ III-ը, ստեղծված իրավիճակի ճնշման տակ, Սալահ ալ-Դինի հետ հաշտություն կնքեց։ Դրանից անմիջապես հետո, իր թիկունքը ապահով զգալով, Անտիոքի իշխանը խաբեությամբ իր մոտ է կանչում Ռուբեն III-ին և գերում նրան։ Բոհեմունդը զորք է հավաքում և մտնում Կիլիկիա, բայց հանդիպում է Լեոնի՝ Ռուբենի եղբոր, գլխավորած հայկական զորքերի ուժեղ դիմադրությանը։

Վերջապես, հայերը, ֆրանկներին, որպես փրկագին տալով 3000 (ըստ Բար Հեբրեոսի՝ 30000) դինար, Մամեստիա, Ադանա քաղաքները և այլ վայրեր, ազատում են Ռուբենին գերությունից։ Կիլիկիա վերադառնալուց հետո, Ռուբենին հաջողվեց վերագրավել այդ վայրերը։ Սակայն 1185 թ. հետո էլ Բոհեմունդը շարունակում էր հարձակումներ կատարել դեպի Կիլիկիայի սահմանամերձ շրջանները[9]։

Ռուբեն III-ի իշխանության վերջին տարիներին (1185—1187) Կիլիկիայում կառավարում էր նրա եղբայրը՝ Լևոնը, որը Ռուբենի մահից հետո (1187) դարձավ Կիլիկյան Հայաստանի իշխանապետը (1187—1198)։ Նրա իշխանության հենց առաջին տարիներին Կիլիկիայի վրա ձեռնարկվեցին երկու արշավանք։

Ըստ Սմբատ Սպարապետի, 1187 թ. բազմաթիվ թուրքմեններ ներխուժում են Կիլիկիա, իսկ սրանց ղեկավար Ռոստոմը «խրոխտայր բառնալ զանուն քրիստոնեից»[10]։ Հասնելով Սիս, թուրքմենները Ռավին վայրի մոտ բանակ են խփում։ Լևոն II-ը փոքրաթիվ ուժերով հարձակվում է նրանց վրա։ Հայերը նախ սպանում են Ռոստոմին, ապա փախուստի դիմած թուրքմեններին հետապնդելով կոտորում ու հալածում են մինչև Սարվանդիքար[11]։

Այս, ինչպես նաև, հավանաբար, նույն 1187 թ. տեղի ունեցած մի ուրիշ արշավանքի վերաբերյալ ուսումնասիրողները հակասական կարծիքներ են հայտնել։ Ս. Բոռնազյանը, օգտվելով

---

4 «Արաբական աղբյուրները», էջ 301, «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 11, Իբն ալ-Ասիր, թարգմ. Ա. Տեր-Ղևոնդյանի (այսուհետև՝ Իբն ալ-Ասիր), Երևան, 1981, էջ 266։

5 «Արաբական աղբյուրները», էջ 301, Իբն ալ-Ասիր, էջ 266։

6 Նույն տեղում։

7 «Արաբական աղբյուրները», էջ 293։

8 Lane-Poole Stanley. Նշվ. աշխ., էջ 206:

9 „Chronique de Michel le Syrien", t. III, Bruxelles, 1963, p. 397—398, The „Chronography of Bar Hebraeus Gregory Abu-l-Faraj, tr. by E. Budge, Amsterdam, 1976, p. 321.

10 «Սմբատայ Սպարապետի Տարեգիրք», Վենետիկ, 1956, էջ 200։

11 Նույն տեղում։

Միքայել Ասորու տեղեկություններից[12], հիշում է թուրքմենների մի ինչ-որ հարձակում նույն տարում, թեև պատմիչը գրում է միայն այն մասին, որ թուրքմենները ապաստանում էին Կիլիկիայի սահմանամերձ լեռներում, փախչելով քրդերից, որոնց հետ ընդհարվել և պարտվել էին Մծբինի ու Մոսուլի կողմերում։ Ապա Ս. Բոնազյանը շարունակում է. «Թուրքմեններից հալածված ապատված Կիլիկիան ասպատակեցին Սալահ ալ-Դինի զինվորները։ Ամանոսյան լեռներից Կիլիկիա ներխուժեց Սալահ ալ-Դինի զորքը ամիր Ռոստոմի առաջնորդությամբ»[13]։ Սակայն Սմբատ Սպարապետը, որից օգտվում է ուսումնասիրողը, ոչնչով չի ակնարկում, որ հիշյալ Ռոստոմը Սալահ ալ-Դինի զորավարն էր։ Նա նրան նույնիսկ ամիր էլ չի կոչում, այլ գրում է. «Թուրքման ոմն Ըռըստոմ»[14]։ Խոսք չկա նաև, որ սրանք ներխուժել են Ամանոսյան լեռներից։

Վերոհիշյալ անհամապատասխանությունը, հավանաբար, ծագում է նրանից, որ անմիջապես նախորդ տողերում Սմբատը խոսում է Սալահ ալ-Դինի մեծ նվաճումների, նրա հաղթանակների մասին[15]։

Մի այլ ուսումնասիրող՝ Գ. Միքայելյանը, նույնպես օգտվելով Միքայել Ասորու և Սմբատ Սպարապետի տեղեկություններից, նույնացնում է վերոհիշյալ դեպքերը, դրանք ներկայացնելով որպես մեկ արշավանք։ Այսպիսով, Ռոստոմի արշավանքը կապվում է քրդերի և թուրքմենների միջև Մծբինի ու Մոսուլի կողմերում տեղի ունեցած ընդհարումների և վերջիններիս քրդերից փախչելու ու Կիլիկիայում ապաստանելու հետ։ Ապա Գ. Միքայելյանը գրում է դրան հաջորդած մի այլ արշավանքի մասին։ «1188 թ.,— նշում է նա,— Սալահ ալ-Դինի զորքերից մի մեծ զորաջոկատ ներխուժեց Անտիոքի իշխանության սահմանները, իսկ այնտեղից էլ Ամանոսյան լեռների մի լեռանցքով մուտք գործեց Կիլիկիա։ Այստեղ, ինչպես հաղորդում են հայ և արաբական աղբյուրները, Սալահ ալ-Դինի զորքը չախչախվեց հայերի կողմից Լևոնի գլխավորությամբ»[16]։ Այստեղ ևս որոշակիություն չկա, քանի որ ուսումնասիրողը չի հիշատակում իր նշած հայ և արաբական աղբյուրներից և ոչ մեկը։ Համենայնդեպս, Գ. Միքայելյանի հիշած վերջին արշավանքը շատ հավանական է, քանի որ հենց նույն 1188 թ. էր, որ Տրիպոլիսի դքսությունն ու Անտիոքի իշխանությունը ենթարկվեցին Սալահ ալ-Դինին[17]։

Թերևս այս նույն արշավանքն է ակնարկում Քամալ ալ-Դին Իբն ալ-Ադիմ պատմիչը՝ գրելով՝ «Այնուհետև սուլթանը [Սալահ ալ-Դինը] որոշեց ևս մեկ անգամ ուղղվել դեպի Քարտ [Հարավային Սիրիա] և դուրս եկավ Դամասկոսից 583 թ. Մուհարրամ ամսի կեսերին [1187 թ. մարտի վերջեր] ուղղվելով դեպի Հալեբ, որ զորահավաք կատարի, սակայն այդ զորքը ուշացավ, որովհետև զբաղված էր ֆրանկների դեմ կռվելով Անտիոքի հողում և Իբն Լևոնի երկրում»[18]։

1187 կամ 1187 և 1188 թթ. տեղի ունեցած երկու (կամ գուցե ավելի) արշավանքները դեռևս բավարար չափով չեն ուսումնասիրված։ Եղած նյութը թույլ է տալիս միայն ենթադրել, որ Ռոստոմի գլխավորած արշավանքը կատարվել է Իկոնիայի սուլթանության տարածքից և վերջինիս թելադրանքով (այսպիսի ենթադրություն է անում Ղ. Ալիշանը)[19]։ Ինչ վերաբերում է սրան հաջորդած արշավանքին (Սալահ ալ-Դինի ձեռնարկած), որի մասին տեղեկությունները բավական կցկտուր են և անորոշ, ապա սա, ինչպես և 1180 թ. արշավանքը, հնարավոր է, նպատակ ուներ օգնելու Իկոնիայի սուլթանությանը, որի հետ Այյուբյանները դաշնակցային կապեր ունեին։

1187 թ. շրջադարձային կետ էր խաչակիր պետությունների պատմության մեջ։ Հիթթինի մոտ, խաչակիրների կրած ծանր պարտությունից հետո Սալահ ալ-Դինը գրավեց Երուսաղեմն ու Պաղեստինի մեծ մասը։ Երուսաղեմի անկման լուրը մեծ տպավորություն թողեց Եվրոպայում և խաչակրաց III արշավանքի առիթ հանդիսացավ (1189—1192)։ Արշավանքը ղեկավարում էին երեք միապետներ՝ Հռոմեական Սրբազան կայսրության կայսր Ֆրիդրիխ I Բարբարոսան, Ֆրանսիայի Ֆիլիպ Օգոստոս և Անգլիայի Ռիչարդ I թագավորները։ Սրանցից հատկապես Ֆրիդրիխն ու-

---

12 Michel le Syrien, t. III, p. 400—403.

13 «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 687։

14 «Սմբատայ Սպարապետի Տարեգիրք», էջ 200։

15 Նույն տեղում։

16 Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, с. 142—143.

17 Lane-Poole Stanley, նշվ. աշխ., էջ 208:

18 Kamal ad-Din, p. 91:

19 Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 442։

ներ նվաճողական մեծ ծրագիր։ Ռիչարդ և Ֆիլիպ Օգոստոս թագավորների հրամանատարության ակ եղած բանակը նավերով Եվրոպայից անցավ Պաղեստին և պաշարեց Ակրան (Աքքա)։ Իսկ Ֆրիդրիխ I Բարբարոսան, մեծաթիվ բանակով, ցամաքային ճանապարհով դիմեց նույն ուղղությամբ և, մեծ դժվարություններ հաղթահարելով, բավական նվազած զորքով հասավ Իկոնիա[20]։ Վարդան պատմիչը գրում է, որ Իկոնիայից Ֆրիդրիխ կայսրը երեք անգամ դեսպաններ ուղարկեց Լևոն II-ի մոտ, բայց պատասխան չստացավ։ Իսկ երբ դուրս եկավ Իկոնիայից, նրան հասավ Գրիգոր Տղա կաթողիկոսի (1173—1193) նամակը՝ «Եթէ եկաք մեք ի Սիս քաղաք և մնամք քեշ աստ»։ Այս նամակն ընդունվում է մեծ խանդավառությամբ, և կայսրը պատասխան նամակ է գրում, որտեղ խոստանում է, որ իր հետ բերած թագով ու զգեստով կաթողիկոսը կալող է «Թագավոր Հայոց» օծել ում որ կկամենա[21]։ Սակայն Ֆրիդրիխ Բարբարոսայի ծրագրերն ու խոստումները չիրականացան, քանի որ զորքով Սելևկիա (Կալիկադնոս) գնալ անցնելիս կայսրը խեղդվեց։

Ինչպես երևում է Վարդան պատմիչի տեղեկությունից, Լևոն II-ը չափազանց զգուշավոր գիրք է գրավել Ֆրիդրիխ I Բարբարոսայի հանդեպ և աշխատել է ընդհանրապես չհանդիպել նրան, շատ լավ հասկանալով կայսեր նվաճողական պլանները, նաև չցանկանալով վատացնել իր հարաբերությունները Սալահ ալ-Դինի հետ։ Վերոհիշյալը լիովին հաստատվում է Իբն Շադադի հետևյալ տեղեկությամբ. «Երբ Լևոնի որդին [Լևոն II-ը] լսեց, թե ինչ պատտհնց նրանց. այսինքն նրանց թագավորի մահը և այդ բանի հետևանքով նրանց կրած բոլոր տառապանքները՝ քաղցի, մահվան և հիվանդությունների պատճառով. չուզեց գնալ նրանց մոտ, որովհետև նախ՝ չգիտեր, թե դեպքերը ինչ ընթացք կստանային և երկրորդ՝ որ նրանք ֆրանկ էին, իսկ ինքը հայ էր և քաշվեց իր անառիկ բերդերից մեկը»[22]։

Վերջապես, չափազանց հետաքրքիր փաստ է այն, որ երբ Ֆրիդրիխ կայսրը մոտեցավ Կիլիկիային, Հայոց Գրիգոր IV Տղա կաթողիկոսը նամակ գրեց Սալահ ալ-Դինին։ Այդ նամակն իրենց գրքերում ամբողջությամբ մեջ են բերում արաբ պատմիչներ Իբն Շադադը[23] և Իբն ալ-Ֆուրաթը[24]։ Դրանում Գրիգոր կաթողիկոսը նկարագրում է Ֆրիդրիխ Բարբարոսայի բանակի առաջխաղացումը մինչև Կիլիկիա, նրանց բախումները հույների, թուրքմենների և Իկոնիայի սելջուկների հետ։ Ապա աշխատում է ամեն կերպ իրեն ու Լևոն II-ին ներկայացնել որպես Սալահ ալ-Դինի բարեկամ ու դաշնակից։ Կաթողիկոսը գրում է, որ երբ Կիլիկիայում ստանում են կայսեր նամակը, նրա մոտ, իբրև պատվիրակ ուղարկում են ոմն Հաթիմի (երեի Հեթում) և բարձրաստիճան այլ անձնավորությունների։ Սրանք իրենց հետ տանում են հայերի պատասխան նամակը, որով «Ալամանների թագավորին» իբրև թե խորհուրդ էր տրվում եւ դառնալ դեպի Կլըչ Արսլանի երկիրը։ Իսկ երբ կայսեր մահից հետո նրա որդին է անցնում զորքի գլուխ և մտնում է Կիլիկիա, Լևոնը սկզբում քաշվում է իր բերդերից մեկը, բայց «Ալմանների թագավորի որդին» սպառնում է գրավել նրա երկիրը, եթե հակառակվի։ Եվ կաթողիկոսը, կարծես փորձելով արդարացնել Լևոնին, ավելացնում է, որ «Լևոնի որդին [Լևոն II] հարկադրվեց տեղի տալ և գնալ դիմավորել թագավորին։ Արդարև, նա գտնվում էր մի մեծաթիվ բանակի դյուխը, որը հավաքել էր արշավանքի համար, այդ բանակը բաղկացած էր քառասուն հազար հեծյալներից և անթիվ հետևակից՝ բաղկացած այլազգի ժողովուրդներից...»[25]։

Այսպիսով, բավական տեղեկություններ հաղորդելով Սալահ ալ-Դինին, Գրիգոր Տղան նամակի վերջում էլ հայտնում է, որ կշարունակի նրան տեղեկացնել հետագա դեպքերի մասին։ Իբն Շադադը նամակն ամբողջությամբ մեջ բերելուց հետո ավելացնում է. «Սա է նամակը կաթողիկոսի և այս բառը նշանակում է խալիֆա, նրա անունն է Բար Քրիքուր իբն Վասիլ»[26]։

Ուսումնասիրողներից ոմանք այս նամակն անվավեր են համարում։ Եվ դա լոկ այն պատճառով, որ իբր կաթողիկոսը չէր կարող բարեկամական նամակներ գրել միաժամանակ թե՛ Ֆրիդրիխ I-ին և թե՛ Սալահ ալ-Դինին։ Այս կարծիքի բավարար հիմք չունենալը ապացուցել է

---

[20] Lane-Poole Stanley, նշվ. աշխ., էջ 208:

[21] «Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 179։

[22] «Արաբական աղբյուրները», էջ 298։

[23] Նույն տեղում, էջ 294—297։

[24] „Tarikh ibn al-Furat", t. I, Basra, 1967, p. 216—219.

[25] «Արաբական աղբյուրները», էջ 294—296։

[26] Նույն տեղում, էջ 297։

Գ. Միքայելյանը, ցույց տալով, որ Գրիգոր Տղան (1173—1193) բարեկամական հարաբերությունների մեջ էր ղեռես Նուր ալ-Դինի հետ և հենց նրա ու Մլեհի օգնությամբ էլ դարձել էր կաթողիկոս և զարմանալի չէ, որ նույնպիսի լավ հարաբերությունների մեջ էր նաև մահմեդական մի այլ տիրակալի հետ[27]։ Բացի այդ, Իբն Շադդադի մոտ հիշատակվում է ոչ միայն այն, որ նամակի հեղինակը հայոց կաթողիկոսն էր և Հռոմկլայի տերը, այլև նրա ճշգրիտ անունը՝ Բար Քրիքուր իբն Վասիլ[28], որ նույնն է թե՝ Գրիգոր Տղա որդի Վասիլի։ Իսկապես, հայտնի է, որ նա ներսես Շնորհալու ավագ եղբոր՝ Վասիլի որդին էր։

Անկասկած, Լևոն II-ը և կաթողիկոսն ունեին որոշակի ընդհանուր քաղաքական դիրքորոշում։ Լևոն II-ը, որպես քաղաքական առաջնորդ, դիմում է չեղոքության թե՛ խաչակիրների և թե՛ Սալահ ալ-Դինի նկատմամբ, սպասելով դեպքերի ընթացքին, իսկ կաթողիկոսը, որը հոգևոր առաջնորդ լինելուց բացի, երբեմն հանդես է գալիս որպես արտաքին գործերը վարող անձ (մի բան, որն ընդունված էր հայոց մեջ), բարեկամական ու հավատարմական նամակներ է գրում թե՛ մեկ և թե մյուս տիրակալին, այդ կերպ փորձելով անվնաս պահել Կիլիկիան։ Ու թեև, ի վերջո, Լևոն II-ը պարեն, անասնակեր ու տեղ է տալիս խաչակիրներին[29], դա ևս չի փոխում նրա քաղաքական ընդհանուր դիրքորոշումը։

Կ. Մարքսը, անդրադառնալով Ֆրիդրիխ I-ի արշավանքին, հայերին պարզապես անվանում է Սալահ ալ-Դինի զաշնակիցներ. «Հարբարոսան առաջ է ընթանում մեծ ավարով, ապա գալիս է քրիստոնեական Հայաստան (Փոքր Հայաստան), այսինքն Կիլիկիա. հայերը Սալահ ալ-Դինի դաշնակիցներն են, բայց միևնույն ժամանակ, ուղեկցում են գերմանացի խաչակիրներին լեռների միջով, նրանց վնաս չտալով»[30]։ Եթե Ֆրիդրիխ I-ից, կամ նրա հաջորդներից հայերն ունեին թագ ստանալու ակնկալիքներ (մի բան, որ 8 տարի անց իրականացավ), ապա Սալահ ալ-Դինն էլ այդ ժամանակ գտնվում էր իր հզորության գագաթնակետին և ցանկացած պահին կարող էր ներխուժել Կիլիկիա. գեռ ավելին, հայոց կաթողիկոսանիստը՝ Հռոմկլան, գտնվում էր նրա տիրույթների մեջ։

Որոնե Գրուսեն մի փոքր միակողմանի է ներկայացնում վերոհիշյալ դեպքերը, գրելով, որ Լևոն II-ը ամեն կերպ աշխատում էր օգնել խաչակիրներին, իսկ Գրիգոր Տղայի՝ Սալահ ալ-Դինին գրած նամակի նպատակը, ըստ նրա, այն է, որ խաչակրաց բանակի հզորությունը նկարագրելով բարոյալքի մահմեդականներին՝ նախքան երկու բանակների հանդիպումը[31]։ Սակայն այս տեսակետը չի հաստատվում աղբյուրների տեղեկություններով։ Ավելին. Իբն Շադդադը հաղորդում է Սալահ ալ-Դինի մոտ կաթողիկոսի ուղարկած նաև մի երկրորդ պատվիրակության մասին։ Այս մարդկանց հետ ուղարկած նամակում կաթողիկոսը տեղեկացնում էր խաչակիրների հետագա առաջխաղացման, նրանց ծայր աստիճան թշվառ վիճակի մասին։ Հետաքրքիր է կաթողիկոսի հատկապես այն հաղորդումը, որ մինչդեռ խաչակրաց զորքը մոտենում է Անտիոքին, Լևոն II-ը և Անտիոքի իշխանը, տեղեկանալով նրանց թուլության, ինչպես նաև թագավորի (Հենրիխ IV-ի, որը հաջորդել էր հորը՝ Ֆրիդրիխին) տկարության ու հիվանդության մասին, փորձում էին գրավել նրանց ունեցվածքը[32]։

Երբ խաչակիրների բանակը մոտեցավ Սիրիային, սկզբում մահմեդականների մեջ խուճապ էր տիրում, և Սալահ ալ-Դինը նախընտրեց ետ քաշել իր կայազորները մի շարք վայրերից, այդ թվում՝ Բաղրաս (Դաստոն) ամրոցից[33]։ Դեռևս 1188—1189 թթ. Սալահ ալ-Դինը պաշարել էր այն և ամրոցը երկար ժամանակ պաշտպանվելուց հետո, ի վերջո, հանձնվել էր, ինչպես և մինչ այդ Դարպսակը։ Այսպիսով, Սալահ ալ-Դինը, դեռևս նախքան խաչակրաց III արշավանքը, հասել էր Ամանոսյան լեռներին և գտնվում էր Կիլիկիայի և Անտիոքի իշխանության սահմանագծին։ Սալահ ալ-Դինը, ըստ արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրի, հրամայեց քանդել բերդը և սա, ըստ պատմիչի, «մեծ վնաս էր մահմեդականներին, քանզի Հայոց տեր [Սահիր ալ-Արման] Լևոնի

---

27 Г. Г. Микаелян, նշվ. աշխ., էջ 145—147։

28 «Արաբական աղբյուրները», էջ 297։

29 Իբն ալ-Ասիր, էջ 275։

30 «Архив Маркса и Энгельса», т. V, Л., 1938, с. 169.

31 R. Grousset, Histoire das Croisades et du royaume franc de Jerusalem v. III, Paris, 1936, p. 15—16.

32 «Արաբական աղբյուրները», էջ 299—300։

33 R. Grousset, նշվ. աշխ., էջ 16:

որդին [Լևոն II], որը սահմանակից էր, իր երկրից եկավ, նորոգեց նրա կառուցվածքը, կատարելագործեց և այնտեղ նշանակեց իր զինվորներից մի խումբ, որն այնտեղից ասպատակում էր դրացի երկիրը և սրանից շատ տուժեց Հայերի շրջակայքի ժողովուրդը։ Այն մինչև օրս էլ նրանց [հայերի] ձեռքում է»[34]։

Այսպիսով, Բաղրասը, որ երկար տարիներ վիճելի տիրույթ էր հայերի և Տաճարականների միջև (սկսած Թորոս II-ից), անցավ Լևոն II-ին։ Այս ամրոցը ռազմական կարևոր դիրք ուներ, հսկում էր Բելյանի կիրճին, որը Սիրիայի մուտքն էր «Դրունք Կիլիկիոյ» կողմից և հետագայում Լևոն II-ի համար կարևոր հենակետ դարձավ Հյուսիսային Սիրիայում մղած կռիվներում։

Կիլիկիայի հայերը Լևոն II-ի դյխավորությամբ կարողացան ոչ միայն անվնաս դուրս գալ խաչակիրներ—այյուբյաններ բախումից, այլև իրենց տիրույթներն ընդարձակել հարավ-արևելքում։

1192 թ. սեպտեմբերի 2-ին Ռամլայում հաշտություն կնքվեց Սալահ ալ-Դինի և խաչակիրների միջև։ Խաչակրաց III արշավանքը ևս վերջ գտավ։ Ըստ այդ հաշտության, խաչակիրները վերստացան Ակրայից մինչև Յաֆա (Հորրե) ընկած ծովափը։ Երուսաղեմն այդպես էլ չգրավվեց ու մնաց Այյուբյանների ձեռքում։ Ընդհանուր առմամբ, արշավանքն անհաջող անցավ[35]։

Ռամլայի հաշտությամբ Սալահ ալ-Դինն առաջվա պես մնաց դրության տերը։ Նա շարունակում էր իշխել մի հսկա տերության վրա, որ ձգվում էր Հայկական Տավրոսի լեռներից մինչև Լիբիական անապատ։ Նա նախատեսում էր նվաճել նաև Իկոնիայի սուլթանությունը, Հայաստանի մի մասը, Ատրպատականը և մինչև իսկ Պարսկաստանը[36]։

Սալահ ալ-Դինը որոշել էր նվաճել նաև Կիլիկիան։ Իր թագավորության վերջին տարում (1193) նա մարդ է ուղարկում Լևոնի մոտ, պահանջելով իրեն հանձնել Կիլիկիան և անձամբ ներկայանալ իրեն, բայց ստանում է հետևյալ հանդուգն պատասխանը. «Երկիր ոչ ունիմ տալ քեզ, բայց եթէ գայցես յերկրիս իմում, տաց քեզ յերկսայրից ըմպելիս, որպէս հաւատակցին քո Ղորստոմիս»[37]։ Այսպիսի համարձակ պատասխան լսելով, սուլթանը «մոմոէր որպէս զառիւծ»[33] և զորքով դիմում է Կիլիկիա։ Նա հասնում է մինչև Կիլիկիայի սահմանը՝ Սև գետը, բայց այստեղ հանկարծ հիվանդանում է ու մեռնում[39]։

Սալահ ալ-Դինի մահից հետո Այյուբյան միասնական պետությունը տրոհվեց մի քանի մասի։ Նրա տերությունը ժառանգեցին որդիները՝ ալ-Աֆդալը, ալ-Ազիզը, ալ-Զահիրը և եղբայրը՝ ալ-Ադիլը։ 1194 թ. եղբայրների միջև սկսվեցին գահակալական կռիվներ։ Այսպիսով, Կիլիկիան ազատվեց մի հզոր ու վտանգավոր թշնամուց։ Ներքին երկպառակություններն ու քայքայված վիճակը Այյուբյանների տիրույթներում շարունակվեցին մինչև 1200 թ., երբ ալ-Ադիլը գրեթե վերականգնեց Սալահ ալ-Դինի տերությունը, բացառությամբ Արաբիայի և Հյուսիսային ու Կենտրոնական Սիրիայի։ Սակայն 1200 թ. հետո էլ Կիլիկիային չէր սպառնում Եգիպտոսի Այյուբյանների ներխուժման վտանգը, քանի որ ալ-Ադիլի իշխանությունը Կենտրոնական Սիրիայից այն կողմ չէր անցնում[40]։ Հարավ-արևելքից Կիլիկիայի սահմաններին կարող էր սպառնալ միայն Հալեպի Այյուբյան սուլթանությունը, որը համեմատաբար թույլ հակառակորդ էր և վտանգավոր էր դառնում միայն այն ժամանակ, երբ հակակիլիկյան դաշինքի մեջ էր մտնում Անտիոքի իշխանության կամ Իկոնիայի սուլթանության հետ։

---

34 Իբն ալ-Ասիր, էջ 273։

35 Lane-Poole Stanley, Նշվ. աշխ. էջ 211։

36 Իբն ալ-Ասիր, էջ 278—279։

37 «Սմբատայ Սպարապետի Տարեգիրք», էջ 204։

38 Նույն տեղում։

39 Նույն տեղում։

40 Lane-Poole Stanley, Նշվ. աշխ., էջ 213—215։

ГОСУДАРСТВО САЛАХ АЛ-ДИНА И КИЛИКИЙСКАЯ АРМЕНИЯ

ВААН ТЕР-ГЕВОНДЯН

Резюме

Основатель Айюбидской династии султан Салах ал-Дин (1171—1193), захватив власть в Египте (1171), за короткое время завоевал и присоединил к своим владениям Сирию, Палестину, Месопотамию и часть Аравии. В 1180 г. Салах ал-Дин предпринял свой первый поход в Киликийскую Армению. Разрушив пограничную крепость Манакир, султан заключил мир с великим князем Рубеном 3-м (1175—1187). В 1187 или 1188 г., при Левоне 2-ом (1187—1219), войска Салах ал-Дина вторглись в Киликийскую Армению со стороны Антиохии, но армянские войска дали им отпор.

После 1188 г. новых нашествий на Киликию не последовало, так как в 1189 г. начался 3-й крестовый поход (1189—1192)—временно поставивший под угрозой завоевания Салах ал-Дина. Предводитель крестоносцев—император Священной Римской империи Фридрих I Барбаросса вынашивал обширные захватнические планы. Понимая опасность, которую представляло огромное войско крестоносцев, и в то же время, учитывая мощь Салах ал-Дина армянский католикос Григорий 4-й Отрок в письменной форме констатировал дружественные отношения киликийских армян к обоим властителям. Особый интерес представляют два письма, посланных султану Салах ал-Дину.

В 1193 г. Салах ал-Дин предпринял большой поход в Киликийскую Армению. Но когда его войска достигли границы Киликии—Чёрной реки, султан неожиданно заболел и скончался. После его смерти Айюбидское государство распалось на несколько частей и не представляло прежней опасности для соседних стран, в том числе и для Киликийской Армении.